

խուսափէր այնպիսի գրաբարբանութիւններից, ինչպէս է «խորհել պարտենք», «այդունակ», և այլն:

Տ. Յ.

Յարութիւն Եսայեան. «Միևնոյն դագաղում» պատկեր, 16 էրես. Թիֆլիս, 1905, գ. 4 կ.:

«Միևնոյն դագաղում»-ը՝ մի յաջողուած պատկեր է կովկասեան վերջին դառն իրականութիւնից:

Ինձ առանձնապէս դուր է գալիս պատկերի մտայղացումը (замыселъ), որ իրաւունք է տալիս ասելու, թէ պ. Եսայեանի մէջ սկսում է արտայայտուել բելլետրիստի ձիրք:

Կատարումը նոյնպէս վատ չէ, բայց այդ կողմից՝ պատկերի արժանաւորութիւնները աւելի բացասական արժանաւորութիւններ են: Պատկերը ազատ է խոշոր պակասութիւններից: Աչքի է ընկնում մանաւանդ այն պակասութիւնների բացակայութիւնը, որոնք մատնանիշ արուեստի պ. Եսայեանի առաջին պատկերները քննադատողների կողմից:

Պատկերի ոճը ամփոփ է և լեզուն՝ իսկական հայերէն, որ ամենևին չի յիշեցնում պ. Եսայեանի թարգմանական հայերէնը Կլարա Տետկինի գրքում:

Տ. Յ.

Փառնակէս. «Զուտողի մալը ուտողին հալալ ա» կամ «Ճարպիկ փառարան» ժողովել մէկ արարուածով. Երևան 1905 թ. 58 էր. գ. 40 կ.

Բաղուցի երիտասարդ Սարգիս Օձխուզողեանը շանտաժի միջոց է դարձնում Մինողի վեջին կարգադրութիւնը. նրա նշանածի, օրիորդ Ջարուհու հայրը, Թորոս Ասլանեանը, տասը հազար բուբուռ օփտ է խոստացել: Այդ քիչ է թւում յարգելի երիտասարդին: Նա այնպէս է ձեռնարկում, թէ մտադիր է հրաժարուել օրիորդ Ջարուհուց, որովհետև, ինչպէս լսել է, օրիորդի հայրը բարակացաւ ունի, իսկ մայրը՝ լուսնոտ է: Կասկածները փարատելու համար՝ պահանջում է բժշկական քննութեան նկատարել օրիորդին և նրա ծնողներին: Ասլանեանները զայրացած են: Երիտասարդը յայտնում է, որ կարելի է բանը բժշկական քննութեան չհասցնել, սակայն այն պայմանով, որ Ասլանեանները օրիորդի օփտի վրայ մի հինգ հազար էլ աւելացնեն, օրիորդի ապագայ բժշկութեան համար: